

1.4. Աշխատանքի շուկայի ցուցանիշներ

1.4.1.Ձբաղվածություն

Տնտեսապես ակտիվ բնակչության միջին թվաքանակը հանրապետությունում 2004թ. հունվար-ապրիլին, ըստ գնահատման, կազմել է 1220.3 հազ. մարդ, որի 90.3%-ը կամ 1102.0 հազ. մարդ զբաղված են եղել տնտեսության մեջ, իսկ 9.7%-ը կամ 118.3 հազ. մարդ (միջինը ժամանակաշրջանի համար) չեն ունեցել աշխատանք, գրանցվել են ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության «ՀՀ զբաղվածության ծառայություն» գործակալությունում և ստացել գործազուրկի կարգավիճակ:

2004թ. ապրիլի վերջի դրությամբ վերոհիշյալ գործակալությունում հաշվառման կանգնած 149.0 հազ. աշխատանք փնտրողներից 98.9%-ը կամ 147.4 հազարը եղել են չզբաղվածներ: Գործազուրկի կարգավիճակ ստացել են չզբաղվածների 79.6%-ը կամ 117.3 հազ. մարդ: Տարեսկզբից աշխատանքի են տեղավորվել 2.6 հազ.մարդ, նրանցից` կանայք` 53.8%:

2004թ. ապրիլ ամսին «ՀՀ զբաղվածության ծառայություն» գործակալությունում գրանցված 2.1 հազ. չզբաղվածներից 1.3 հազարը կամ 61.9%-ը ստացել են գործազուրկի կարգավիճակ: Նույն ժամանակամիջոցում հաշվառումից հանվել են 3.0 հազ. չզբաղված աշխատանք փնտրողներ, նրանցից 0.7 հազարը կամ 23.3%-ը` աշխատանքի տեղավորման պատճառով: ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության «ՀՀ զբաղվածության ծառայություն» գործակալության միջնորդությամբ նախկինում աշխատանք փնտրող 721 աշխատանքի տեղավորվածներից 53.3%-ը եղել են կանայք:

Աշխատուժի առաջարկն ըստ հանրապետության մարզերի¹, 2004թ. ապրիլին

	Աշխատանք փնտրողների թվաքանակը		նրանցից` չզբաղվածներ		նրանցից` գործազուրկներ	
	ընդամենը, հազ. մարդ	2003թ. ապրիլի նկատմամբ. %	ընդամենը, հազ. մարդ	2003թ. ապրիլի նկատմամբ. %	ընդամենը, հազ. մարդ	2003թ. ապրիլի նկատմամբ. %
ք.երևան	33.4	90.3	33.1	89.9	29.2	87.7
Արագածոտն	2.3	100.0	2.1	100.0	1.4	93.3
Արարատ	5.5	87.3	5.3	86.9	4.0	81.6
Արմավիր	8.4	98.8	8.4	98.8	5.4	93.1
Գեղարքունիք	8.7	96.7	8.5	95.5	5.8	89.2
Լոռի	27.6	103.0	27.4	102.6	22.0	100.0
Կոտայք	7.8	84.8	7.8	85.7	5.6	82.4
Շիրակ	30.9	94.8	30.8	94.8	25.1	91.6
Սյունիք	16.6	97.6	16.5	97.6	13.5	95.8
Վայոց ձոր	2.3	104.5	2.3	104.5	1.7	100.0
Տավուշ	5.5	105.8	5.2	104.0	3.6	97.3
Ընդամենը ՀՀ	149.0	95.5	147.4	95.2	117.3	91.9

Կանայք կազմել են պաշտոնապես գրանցված գործազուրկների 69.3%-ը: Նրանց տեսակարար կշիռը գործազուրկների ընդհանուր թվաքանակում 2003թ. ապրիլի նկատմամբ աճել է 1.9%-ով: Աշխատուժի պաշտոնապես հայտարարված պահանջարկը 2004թ. ապրիլի վերջին կազմել է 701 մարդ, այդ թվում` 77.0%-ը կամ 540-ը` բանվորական մասնագիտությունների նկատմամբ:

¹ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության «ՀՀ զբաղվածության ծառայություն» գործակալության տվյալներով:

**Աշխատուժի նկատմամբ գործատուների պահանջարկն
ըստ մասնագիտությունների, 2004թ. ապրիլին¹**

Մասնագիտությունների անվանումը	Ընդամենը	այդ թվում՝ անսվա վերջի դրությամբ
Ազատ աշխատատեղեր	973	701
Ծառայողներ, ընդամենը	222	161
<i>նրանցից՝</i>		
տնտեսագետ	3	-
ինժեներ	6	6
բժիշկ	44	39
մանկավարժ	20	16
իրավաբան	1	-
գյուղատնտես	-	-
այլ մասնագետներ	147	100
Բանվորներ, ընդամենը	751	540
<i>նրանցից՝</i>		
խառատ	17	10
փականագործ	42	11
մեխանիկ	7	3
էլեկտրիկ	14	9
ատաղձագործ	4	4
վարորդ	60	54
եռակցող	45	35
կոշկագործ	-	-
կարող, մանող, գործող, ջուլիակ	69	38
բանվորական այլ մասնագիտություններ	277	198
մասնագիտություն չպահանջող աշխատատեղեր	217	178

Մեկ թափուր աշխատատեղի ծանրաբեռնվածությունը կազմել է 210 չգբաղված մարդ՝ նախորդ ամսվա համեմատ նվազելով 11.8%-ով, իսկ նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատ՝ աճելով 43.8%-ով:

Հանրապետությունում նպաստառու գործազուրկների թվաքանակը 2004թ. ապրիլին կազմել է 6.2 հազ. մարդ, իսկ գործազրկության նպաստի միջին չափը՝ 3236 դրամ: Նույն ամսում դրամական օգնություն ստացել են 12.4 հազ. գործազուրկ: Դրամական օգնության միջին չափը կազմել է 1427 դրամ:

Գործազրկության մակարդակը, հաշվարկած որպես զբաղվածության տարածքային կենտրոններում պաշտոնապես գրանցված գործազուրկների և տնտեսապես ակտիվ բնակչության (զբաղվածներ և գործազուրկներ) հարաբերակցություն, 2004թ. ապրիլին կազմել է 9.5% և 2003թ. ապրիլի նկատմամբ նվազել է 0.7 տոկոսային կետով:

¹ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության «ՀՀ զբաղվածության ծառայություն» գործակալության տվյալներով: